ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 փետրվարի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

18
(3227)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՄ-Ն ՔՊ-Ի ՀԱՄԱՐ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԱՆԱԿՆԿԱԼ ՈՒՆԻ

Հայաստանի մայրաքաղաքում մայիսի 7-ին տեղի կունենա Եվրոպական քաղաքական համայնքի (ԵՔՀ) 8-րդ գագաթնաժողովը, որին հրավիրված են մի շարք եվրոպական պետությունների ղեկավարներ եւ խորհրդարանների ներկայացուցիչներ՝ քննարկելու ամենակիրառական հարցեր՝ անվտանգության, միգրացիայի, ենթակառուցվածքների ու քաղաքական համագործակցության շուրջ:

Եվրոպական միությունն էլ շտապ քայլերով խորացնում է համագործակցությունը Երեւանի հետ՝ նախատեսելով նաեւ առաջին EU-Armenia գագաթնաժողովը: Միաժամանակ, ԵՄ-ն եւ Հայաստանը առաջատար քայլեր են անում վիզայի ազատականացման ուղղությամբ՝ երկկողմանի Visa Liberalisation Action Plan-ը արդեն քննարկվում է կառավարական մակարդակով: Սպասվում է, որ գարնանը կհրապարակվի ԵՄ գնահատումը այս ծրագիրը կյանքի կոչելու ընթացքի մասին, ինչը կարող է լինել կարեւոր լեգիտիմ քայլ դեպի վիզաազատական ճանապարհ:

«Ժողովուրդ» օրաթերթին իշխանական ՔՊ-ի ներսում առկա խոսակցություններից ի հայտ դարձավ, որ մայիսի համաժողովի օրերին իշխանությունը կստանա ստորագրված փաստաթուղթ: Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի անցկացումը Երեւանում, ինչպես նաեւ վիզաների ազատականացման շուրջ հնարավոր նախաստորագրումները իշխանության համար կարող են ներկայացվել որպես արտաքին քաղաքական նշանակալի ձեռքբերումներ:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց կառավարությանը՝ մեկնաբանություն խնդրելով, սակայն մեր հարցերը մնացին անպատասխան:

Աշխարհաքաղաքական աջակցությունը չի կարող մեծ արժեք ունենալ այն պայմաններում, երբ երկրի ներսում շարունակվում են ընդդիմախոսների նկատմամբ քրեական հետապնդումները, քննադատության համար կալանքները, հոգեւորական քաղբանտարկյալների եւ քաղաքական ճնշումները:

Արեւմտյան հարթակներում ստացված աջակցությունը, որքան էլ կարեւոր լինի, չի կարող փոխարինել ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը եւ իրավական պետության իրական կայացմանը: Հակառակ դեպքում ստացվում է պարադոքս. արտաքին աշխարհում իշխանությունը փորձում է ներկայանալ որպես եվրոպական արժեքների կրող, մինչդեռ ներքին քաղաքական կյանքում դասական բռնապետական բարքեր են:



Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանին պատկանող գույքերի առնչությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներով՝ նախկին նախարարին պատկանող եւ ապօրինի ծագում ունեցող գույքեր էին դիտվել նաեւ նրա կնոջ՝ Ռ.Խ.-ի քրոջ աղջկա՝ Ա.Բ.-ի անվամբ գրանցված՝ Երեւան քաղաքի Նալբանդյան փողոցում գտնվող երկու անշարժ գույքերը: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից ներկայացված դիմումների հիման վրա՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 10-ի եւ 23-ի որոշումներով վերոնշյալ երկու անշարժ գույքերի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցներ էին կիրառվել՝ արգելելով Ա.Բ.-ին որեւէ գործողություն կատարել դրանց տնօրինման հետ կապված: Դատարանի որոշումների հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում նշված գույքերի նկատմամբ կիրառվել էին օտարման սահմանափակումներ, որի վերաբերյալ որոշումը հանձնվել էր Ա.Բ.-ին:

Համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները բացահայտել են տելեգրամյան ալիքի միջոցով թմրանյութերի իրացման երկու դեպք, ընդ որում, երկու դեպքում էլ, ըստ կասկածյալների, թմրանյութը ձեռք են բերել նույն կայքէջից: Առաջինը փետրվարի 11-ին էր: Այդ օրն անցկացված ուժեղացված ծառայության ընթացքում Նոր Նորքի համայնքային ոստիկանները Բագրեւանդի փողոցում կանգնեցրել են «ԲՄՎ» մակնիշի մի մեքենա: Ստուգման ընթացքում ոստիկանները մեքենայի սրահում նկատել են էլեկտրական կշեռք եւ պոլիէթիլենային տոպրակով կասկածելի զանգված: Ոստիկանության գվարդիայի ծառայողների եւ պարեկների հետ համայնքային ոստիկանները վարորդին, երկու ուղեւորին ու մեքենան տեղափոխել են Նոր Նորքի բաժին: Պարզվել է, որ երեքն էլ Աբովյան քաղաքի բնակիչ են: Նրանց խուզարկությամբ հայտնաբերվել են բջջային հեռախոսներ, մեկի մոտ՝ նաեւ ծալովի դանակ: 33-ամյա վարորդը հայտնել է, որ մեքենայում թմրամիջոց կա, որը ձեռք են բերել տելեգրամյան ալիքի միջոցով անձնական օգտագործման համար:



Քննչական կոմիտեն հայտնում է, որ Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանի գործով նախաքննության ավարտ հայտարարվեց: Հիշեցնենք, որ Արշակ Սրբազանը ձերբակալվել է դեկտեմբերի 4-ին ԱԱԾ-ի կողմից՝ ՔԿ շենքից դուրս գալիս: ՔԿ-ն պաշտոնապես հաղորդեց, որ նրա նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ թմրամիջոց ապօրինի իրացնելը՝ հանդիսադիր վայրում): Դեկտեմբերի 5-ին Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Մասիս Մելքոնյանի որոշմամբ Արշակ Սրբազանը կալանավորվել է:

ՇԱՆՏԱԺԻ ԼԵԶՈՒՆ

ԹՈՒՅԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹՈՒՅԼ ՂԵԿԱՎԱՐ

«Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ, Ադրբեջանի հարցերով փորձագետ Գառնիկ Դավթյանն ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձավ Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերություններին, հայ գերիների եւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ կիրառված Բաքվի շինծու դատավարություններին, ինչպես նաեւ համաոլեական ընտրություններին ընդառաջ իրենց անելիքներին:

-Պարոն Դավթյան, կարո՞ղ եք անդրադառնալ Հայաստան-Ադրբեջան փոխհարաբերություններին, Ձեր գնահատմամբ՝ ինչպե՞ս է այն զարգանում, որովհետեւ Հայաստանի գործող իշխանությունները պարբերաբար խոսում են խաղաղության մասին, սակայն Ադրբեջանի կողմից մենք պահանջներ ենք տեսնում: Նաեւ կխնդրեմ շեշտը դնել նրա վրա, որ խաղաղության այս ֆոնին Բաքուն հրապարակեց ապօրինի ծանր դատավճիռները:

-Նախ շեշտեմ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի մեջ չկան փոխհարաբերություններ, այն պարզ տրամաբանությամբ, որը մենք անկնկալում ենք, դա իրենից ենթադրում է երկու կողմի բարիդրացիական հարաբերություն, փոխզիջման իրականացում, բայց մենք տեսնում ենք, որ այսօրվա այսպես կոչված հարաբերությունները միակողմանի են: Ադրբեջանի կողմից հնչում են պահանջներ խաղաղության շանտաժի տակ, եւ որին տրվում է այսօրվա իշխանությունները, եւ տեսնում ենք զիջումների հերթական շրջան, եւ տեսնում ենք, որ Նիկոլ Փաշինյանը չի զբաղվում Հայաստանի ժողովրդի շահի պաշտպանությամբ, այլ պարզապես իրականացնում է ադրբեջանցիների շահի սպասարկումը, այսինքն՝ ի վնաս եւ ի հաշիվ Հայաստանի:

Ինչ վերաբերվում է ընդհանուր գործընթացին, խնդիրը բազմակողմանի է: Մենք գիտենք, որ կան Ալիեւի կողմից հնչող պահանջներ. հանձինս ամենաարդիականը Սահմանադրության փոփոխությունն է, որը դեռեւս շատ է խոսվում, բայց նաեւ պետք է շեշտեմ, որ կա 300 հազար ադրբեջանցիների վերադարձի օրակարգ, Արեւմտյան Ադրբեջան կոչված հակահայկական կառույցի գործունեությունը, որը, ի դեպ, նշեմ, երկու օր առաջ այնտեղ Փաշազադեն էր ելույթ ունեցել. ի վնաս հայերի պնդումներ արեց՝ ադրբեջանցիների վերադարձի մասով, նշեց, որ դա կարեւորագույն խնդիր է, հայերին մեղադրեց եւ ցեղասպանության մեջ, եւ բռնագաղթի ենթարկելու մեջ մեղադրվեցին հայերը: Եւ պնդում արվեց, որ Արեւմտյան Ադրբեջանի օրակարգը կարեւոր է, եւ դա նախաձեռնվել է Ալիեւի կողմից, եւ ըստ երեւույթին, իրավիճակ ստեղծվեց, որ մենք նորից նույն փակուղում ենք առաջանում, իսկ ի՞նչ երաշխիք կա, որ եթե անգամ խաղաղության պայմանագիրը լինի, նոր պահանջներ ի հայտ չեն գա: Եւ ասել, որ կա օրակարգ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, դա ինքնախաբեություն է:

-Իսկ կարո՞ղ ենք ասել, որ սրանով Ադրբեջանը ժամանակ է շահում՝ սպասելով, թե ինչ պատկեր կձեւավորվի համապետական ընտրություններին, եւ Նիկոլ Փաշինյանը փորձում է ժողովրդի քվեն ապահովել:

-Այն պրոցեսները, որոնք տեղի են ունենում Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ, խոսում են թույլ ղեկավարի մասին, այսինքն՝ այսօրվա իշխանությունները ներկայացնում են թույլ կառավարություն, որոնք չունեն եւ տղամարդկային հատկություններ՝ որպես քաղաքական գործիչ, որպեսզի առաջ մղեն ժողովրդի շահը եւ պահանջները եւ առհասարակ պատկերացում չունեն՝ քաղաքականությունը ինչ է, իրենց մոտ պարզապես մեկօրյա քաղաքականություն է գործում, եւ երկրորդ օրը երբ ինչ-որ իրավիճակ է ստեղծվում՝ ի վնաս Հայաստանի նոր որոշում են կայացնում: Սա այն հստակ արձանագրումն է, որ Նիկոլ Փաշինյանը թույլ ղեկավար է, եւ նման ղեկավարի վրա հույս դնել պետության կառավարում՝ նշանակում է պետություն չունենալ:

-Պարոն Դավթյան, իշխանությունները պնդում են, որ իրենք ժողովրդի հետ խոսում են խաղաղության լեզվով, իսկ ընդդիմությունը պատերազմ է ուզում: Իսկ ընդդիմությունը պնդում է, որ ուզում է արժանապատիվ խաղաղություն, եթե «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը հաղթի համապետական ընտրություններին, Դուք ինչպե՞ս եք տեսնում արժանապատիվ խաղաղությունը:

-Ես նշեմ, որ մենք անպայման լինելու ենք հաղթող կողմ մեր ընտրություններում եւ ներկայացնելու ենք մեր ժողովրդի ձայների մեծամասնությունը, սա աներկբա է: Ինչ վերաբերում է խաղաղության եւ պատերազմի եզրույթին, սա նորություն չէ, սա Նիկոլ Փաշինյանի հոգեվիճակն է եւ մարդկանց հետ շանտաժի լեզվով խոսելու մոտեցումն է:

Այդ նույն խաղաղություն բերող Նիկոլ Փաշինյանը բերեց մի քանի պատերազմ հայ ժողովրդի գլխին: Առաջինը հենց Սյունիքի եւ Գեղարքունիքի վրա համատեքստում, երկրորդը Արցախի կորուստը, եւ երրորդը բերեց շանտաժի լեզվով այս անգամ բացահայտ՝ Տավուշում հայրենակիցների հանդիպման ժամանակ ասաց՝ եթե չտանք, պատերազմ է լինելու: Ես, այս ամենից ելնելով, կարող եմ իրենց խորհուրդ տալ հիմնել ստի նախարարություն, որը իրենց լավագույն ցուցիչը կլինի, թե իրենք իբրեւ գործ են անում:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԿԳՆԱՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ մարտի 2-ին ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում նիստ է հրավիրվել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նիստի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը պետք է ներկայացնի «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի նախագիծը:

Նշենք, որ նախագիծը ներկայացվելու է երկրորդ ընթերցման համար: Հավելենք, որ ըստ նախագծի՝ այն նպատակ ունի խթանել պայմանագրային զինվորական ծառայությունը, հատկապես 24-25 տարեկան զինծառայողների շրջանում:

Սուրեն Պապիկյանի խոսքով՝ներկայում «Պաշտպան հայրենյաց» ծրագրով ավելի քան 4000 պարտադիր ժամկետային զինծառայող արդեն անցել է պայմանագրային ծառայության, եւ այս հոսքը աճի միտում ունի:

Նախագծով առաջարկվում է նաեւ, որ հնգամյա առաջին պայմանագրի ավարտից հետո նոր պայմանագիր կնքող զինծառայողները ստանան պատվովճար՝ 2 տարվա պայմանագրի դեպքում՝ 1.5 մլն դրամ, 5 տարվա պայմանագրի դեպքում՝5 մլն դրամ:

Նշենք, որ նույն նիստին նախագծեր են ներկայացնելու ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը, ՀՀ ՆԳ նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը:

Ս. Գ.

ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈԽԵԼ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԸ

Առաջիկա ԱԺ հերթական ընտրություններին ընդառաջ՝ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները կարող են ժամանակավոր փոխել իրենց հաշվառման վայրը: Այս մասին հայտնում են Հայաստանի ԿԸՀ-ից:

«Մինչ մայիսի 26-ը՝ ժամը 14:00-ն, քաղաքացիները կարող են դիմել ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության վարչություն՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու եւ ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու համար:

Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այլ անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր»,- նշում են ԿԸՀ-ից՝ հիշեցնելով, որ ՀՀ ԱԺ ընտրություններին ընտրելու իրավունք ունի 18 տարին լրացած ՀՀ քաղաքացին:

ԻՐԱՆ–ԱԴՐԲԵՋԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ

Իրանի եւ Ադրբեջանի պաշտոնյաները հայտարարել են տրանսպորտի եւ տարանցման ոլորտներում համագործակցության ընդլայնման եւ զարգացման անհրաժեշտության մասին:

Իլհամ Ալիեւը Բաքվում ընդունել է Իրանի ճանապարհների եւ քաղաքաշինության նախարար Ֆարզանե Սադեղին, որը Ադրբեջանի մայրաքաղաք էր մեկնել՝ մասնակցելու Իրան-Ադրբեջան համատեղ տնտեսական համագործակցության 17-րդ հանձնաժողովի նիստին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են համատեղ ծրագրերն ու երկկողմ համագործակցության ամրապնդման հեռանկարները: Ալիեւը նշել է, որ ընթացիկ համատեղ նախաձեռնությունները երկու երկրների համար լայն հնարավորություններ կստեղծեն եւ հույս է հայտնել, որ բանակցությունները կբերեն դրական արդյունքների:

Իրանի նախարարն իր հերթին ընդգծել է, որ Իրանի եւ Ադրբեջանի միջեւ առկա պատմական, կրոնական եւ մշակութային ընդհանրությունները կարեւոր հիմք են երկկողմ համագործակցության զարգացման համար՝ հատկապես տրանսպորտի եւ տարանցման ոլորտներում:

Քննարկվել է նաեւ Արաքս գետի վրա ավտոմայրուղային կամրջի կառուցման նախագիծը, որը կապելու է Աղբանդ եւ Քելալեհ շրջանները, ինչպես նաեւ էներգետիկայի ոլորտում համագործակցության ընդլայնումը:

Կողմերը մտքեր են փոխանակել նաեւ Կասպից ծովում համատեղ նավթային հանքավայրերի շուրջ եւ հարեւան երկրների հետ տրանսպորտի ու էներգետիկայի ոլորտներում երկկողմ եւ բազմակողմ տարածաշրջանային համագործակցության զարգացման հարցերի վերաբերյալ:

«ԵՐԵՔ ՕՐՈՒՄ ԳՐԱՎՈՒՄ Է ԿԻԵՎԸ»

«Այսօր լրանում է ուղիղ չորս տարին, ինչ Պուտինը «երեք օրում գրավում է Կիեւը»»,-հայտարարել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին՝ Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ սանձազերծված լայնամասշտաբ պատերազմի չորրորդ տարելիցի օրը՝ փետրվարի 24-ին:

«Եւ սա շատ բան է ասում մեր դիմադրության մասին, այն մասին, թե ինչպես է պայքարում Ուկրաինան այս ամբողջ ընթացքում: Այս խոսքերի հետեւում մեր միլիոնավոր մարդիկ են, մեծ քաջությունը, ծանր աշխատանքը, դիմացկունությունը եւ այն մեծ ուղին, որն Ուկրաինան հաղթահարում է փետրվարի 24-ից ի վեր»,-հայտարարել է Զելենսկին:

«Մենք լիակատար իրավունք ունենք ասելու, որ մենք պաշտպանել ենք անկախությունը, մենք չենք կորցրել պետականությունը, Պուտինը չի հասել իր նպատակներին: Նա չկոտրեց ուկրաինացիներին, չհաղթեց այս պատերազմում: Մենք պահպանեցինք Ուկրաինան եւ կանենք ամեն ինչ խաղաղության ու արդարության հասնելու համար»,- հավելել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՎԱԾ ՆԱՎԻՆ

Ամերիկացի զինվորականները հարված են հասցրել հերթական նավին, որը, ըստ ԱՄՆ հետախուզության, Կարիբյան ծովում թմրանյութեր էր տեղափոխում: Այս մասին հաղորդել է ԱՄՆ զինված ուժերի Հարավային հրամանատարությունը (SOUTHCOM):

«Փետրվարի 23-ին SOUTHCOM-ի հրամանատար գեներալ Ֆրենսիս Լ. Դոնովանի հրամանով «Հարավային նիզակ» օպերատիվ խումբը մահացու հարված է հասցրել ահաբեկչական կազմակերպության կողմից շահագործվող նավին: Հետախուզության տվյալների համաձայն՝ այն շարժվում էր Կարիբյան ծովում թմրամաքսանենգության հայտնի երթուղով եւ զբաղվում թմրամաքսանենգության գործողություններով»,-ասվում է X-ում հրամանատարության հաղորդագրության մեջ:

Նշվում է նաեւ, որ գործողության ընթացքում սպանվել է երեք տղամարդ թմրաահաբեկիչ: Ամերիկացի զինծառայողներից ոչ ոք չի տուժել:

2025թ. սեպտեմբերից ի վեր ԱՄՆ-ն Կարիբյան ծովում եւ Խաղաղ օվկիանոսի արեւելյան մասում 40-ից ավելի հարված է հասցրել նավերի, որոնք, ամերիկյան հետախուզության պնդմամբ, թմրանյութեր էին տեղափոխում: Հարվածների հետեւանքով, ընդհանուր առմամբ, սպանվել է 140 մարդ:

ԶԵԼԵՆՍԿԻՆ ԱԿՆԿԱԼՈՒՄ Է

Ուկրաինան Եվրամիությունից կոնկրետ որոշումներ է ակնկալում իր ապագա անդամակցության վերաբերյալ: Կիեւում կարծում են, որ գործընթացի հետաձգումը լրացուցիչ ռիսկեր է ստեղծում պատերազմի եւ Ռուսաստանի կողմից ճնշման ֆոնին: Այս մասին հաղորդում է «ՌԲԿ-Ուկրաինա»-ն՝ վկայակոչելով Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու հարցազրույցը Financial Times-ի հետ:

Նախագահն ընդգծել է, որ ցանկանում է կոնկրետ ժամկետ տանալ եւ ԵՄ-ին խնդրում է այլեւս չհետաձգել այդ որոշումը, որպեսզի ապագա ղեկավարները եւ ուկրաինացիների նոր սերունդը չհայտնվեն այնպիսի իրավիճակում, որ Ռուսաստանը տասնամյակներ շարունակ արգելափակի Ուկրաինայի անդամակցությունը:

Նշվում է, որ Զելենսկու հայտարարություններն արտացոլում են Ուկրաինայի ռազմավարական ձգտումը՝ ամրապնդվելու եվրոպական կառույցներում եւ նվազեցնելու արտաքին ճնշման ազդեցությունն ազգային քաղաքականության վրա: ԵՄ-ին անդամակցության կոնկրետ ժամկետը համարվում է երկրի «երկարաժամկետ անվտանգության եւ կայունության առանցքային տարր, ինչն առանձնապես հրատապ է Ռուսաստանի կողմից աճող ագրեսիայի համատեքստում»:

Ուկրաինական կողմի տեսանկյունից՝ եվրահնտեգրման հետաձգումը երկարաժամկետ ռիսկեր է ստեղծում երկրի համար: Զելենսկու խոսքով՝ ՌԴ ղեկավարությունը փորձում է տարբեր քաղաքական մանեւրներ օգտագործել, այդ թվում՝ միջազգային գործընկերների հետ փոխգործակցությունը, որպեսզի թուլացնի բանակցություններում Կիեւի դիրքերը:

ԼՈԵՑՆՈՒՄ ԵՆ

ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ԱԶԱՏՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

ArmLur.am-ին առողջապահության նախարարությանը մոտ կանգնած աղբյուրներից հայտնի է դարձել, որ Առողջապահության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրումից հետո ոլորտում առկա դժգոհությունները փորձ է արվում լռեցնել բժիշկներին աշխատանքից ազատելու միջոցով:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ արդեն մի քանի բժշկական հաստատություններում անցկացվել են փակ ժողովներ, որոնց ընթացքում բժիշկներին զգուշացվել է, որ համակարգի ներդրման հետեւանքով, թեեւ նրանց աշխատավարձերը կրճատվելու են, սակայն որեւէ պարագայում չպետք է բողոքեն կամ հրապարակային դժգոհություն հայտնեն: Ըստ նույն աղբյուրների՝ բուժանձնակազմին հորդորել են «հարմարվել նոր պայմաններին» եւ խուսափել հատկապես սոցիալական հարթակներում քննադատական գրառումներից:

Հատկանշական է, որ եղել են բժիշկներ, որոնք ֆեյսբուքյան հարթակներում հրապարակայնորեն քննադատել են նախարարի նախաձեռնած ապահովագրական համակարգը: ArmLur.am-ի տեղեկություններով՝ քննադատությանը ականջալուր լինելու փոխարեն նրանց պարզապես ազատել են աշխատանքից: Կան նաեւ բուժհաստատություններ, որտեղ քննադատող բժիշկներին տրվել են նկատողություններ:

Խնդրի վերաբերյալ մեկնաբանություն ստանալու նպատակով ArmLur.am-ը դիմեց ՀՀ առողջապահության նախարարություն՝հետաքրքրվելով, թե ինչու է նախարարը հրահանգում բուժհաստատությունների տնօրեններին՝ իրեն քննադատող բժիշկներին ազատել աշխատանքից: Մասնավորապես, հարցը հասցեագրվել էր նախարար Անահիտ Ավանեսյանի խոսնակ Մարիամ Ծատրյանին:

Ի պատասխան՝ նախարարությունից ArmLur.am-ին փոխանցեցին հետեւյալը. «Որեւէ ժողովի եւ դրա բովանդակության մասին տեղեկատվության չեմ տիրապետում: Բժշկական որեւէ կենտրոնի հրահանգ, պարտադրանք կամ, ինչպես դուք նշեցիք, «տեռորի» չենք ենթարկել: Եւ, առհասարակ, բուժհաստատությունների հետ ունենք գործընկերային հարաբերություններ եւ փոխադարձ կոնստրուկտիվ մոտեցում: Դուք ինքներդ եք տեսնում, թե որքան բաց եւ հրապարակային ենք ներկայացնում ապահովագրության ծրագիրը՝ այդ թվում սոցիալական էջերում ենք ակտիվ: Եւ խնդիր չենք տեսնում, երբ մեզ քննադատում կամ հակադրվում են: Ինչ վերաբերում է բժշկի աշխատանքից ազատվելուն, ապա հասցեատերը նախարարությունը չէ, այստեղ արդեն գործատու-աշխատակից հարաբերություններ են, եւ իմ մեկնաբանելու տիրույթի հարց չէ»:

Փաստորեն, նախարարությունը չի հերքում բժիշկների աշխատանքից ազատման փաստը՝ շեշտադրելով, որ դա նախարարության իրավասությունից դուրս՝ գործատու-աշխատակից հարաբերությունների շրջանակում է:

ArmLur.am-ը գիտի աշխատանքից ազատված եւ նկատողություն ստացած բժիշկների տվյալները, ինչպես նաեւ համապատասխան բուժհաստատությունների անունները: Սակայն այս փուլում դրանք չենք հանրայնացնում՝ բժշկական համայնքը լրացուցիչ թիրախավորման չենթարկելու նպատակով:

Այնուամենայնիվ, եթե շարունակվեն հիպոկրատի երդում տված մասնագետների նկատմամբ այս ճնշումները, խմբագրությունը անունները կհրապարակի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎՐԱՍՏԱՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԿԴՆԻ

Վրաստանի կառավարությունը նոր կարգավորումներ է սահմանել օտարերկրյա քաղաքացիների աշխատանքի տեղավորման հարցում՝ մի շարք ծառայությունների ոլորտներում սահմանելով զրոյական քվոտաներ: Այս մասին տեղեկանում ենք Business Media պարբերականից. օտարերկրացիները չեն կարողանա աշխատել որպես տաքսու վարորդներ, առաքիչներ եւ զբոսավարներ, եթե չունեն մշտական կացության թույլտվություն:

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն ստորագրել է հրամանագիր, որով հաստատվում են օտարերկրյա քաղաքացիներին աշխատանքի թույլտվությունների տրամադրման նոր կանոնները:

Կառավարությունը սահմանել է քվոտաների համակարգ՝ սահմանափակելով օտարերկրացիների թիվը, որոնք կարող են ներգրավվել ծառայությունների ոլորտում: Տարբեր ոլորտների համար սահմանվում են տարբեր քվոտաներ, սակայն առաքիչների, զբոսավարների եւ ուղեւորափոխադրումներով զբաղվող վարորդների (տաքսի եւ հասարակական տրանսպորտ) համար քվոտաները սահմանվել են զրոյական:

Նոր կարգավորումները չեն վերաբերում բարձր որակավորում ունեցող մասնագետներին, որոնց ամսական աշխատավարձը գերազանցում է 5600 ԱՄՆ դոլարը:

ՀԵՐՔՈՒՄ ԵՎ ԱՆՀԻՄՆ Է ՀԱՄԱՐՈՒՄ

Չինաստանի իշխանությունները բացարձակապես անհիմն են համարում ԱՄՆ Պետդեպարտամենտի մեղադրանքներն այն մասին, թե վերջին տարիներին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում միջուկային փորձարկումներ են իրականացվել: Այս մասին հայտարարել է զինաթափման հարցերով Չինաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Շեն Ցզյանը:

«Միացյալ Նահանգների այն մեղադրանքները, թե ՉԺՀ-ն միջուկային փորձարկումներ է անցկացնում, բացարձակապես անհիմն են»,-Global Times-ը մեջբերում է Շեն Ցզյանի խոսքերը, ով ելույթ է ունեցել Ժնեւում՝ Զինաթափման համաժողովի նստաշրջանի ժամանակ:

Ինչպես նա ընդգծել է, Պեկինը հաստատակամորեն սատարում է «Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին» պայմանագրի նպատակներն ու խնդիրները: Շեն Ցզյանը նշել է, որ Վաշինգտոնը պետք է հավատարիմ մնա նմանօրինակ գործունեության մորատորիումի վերաբերյալ իր պարտավորություններին եւ այս հարցում «աջակցի գլոբալ կոնսենսուսին»:

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ի կողմից ՉԺՀ-ի հասցեին հնչեցված նշյալ մեղադրանքները «լոկ պատրվակ են ամերիկյան կողմի սեփական միջուկային փորձարկումների վերսկսման համար»:

Ավելի վաղ ԱՄՆ պետքարտուղարի սպառազինությունների վերահսկման եւ չտարածման հարցերով օգնական Քրիստոֆեր Յան հայտարարել է, թե Ռուսաստանն ու Չինաստանը իբր վերջին տարիներին փոքր հզորության միջուկային փորձարկումներ են իրականացրել: Նրա պնդմամբ՝ Չինաստանում դա տեղի է ունեցել, մասնավորապես, 2020 թվականի հունիսի 22-ին՝ Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջանի (երկրի հյուսիս-արեւմուտք) Լոբնոր լճի մոտ գտնվող փորձադաշտում:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԱԶԱՏՎԵԼԸ ԾԱՆՐ Է ՏԱՐԵԼ

ArmLur.am-ին ինքնասպան եղած նախկին դատախազ Տիգրան Սուքիասյանի ողբերգական դեպքից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, նախկին դատախազ Տիգրան Սուքիասյանի մտերիմները պատմեցին, որ նա հոգեբանորեն խիստ ընկճված վիճակում է եղել, քանի որ ազատել էին իր հարազատ դատախազական համակարգից:

Հիշեցնենք, որ նա դատախազի պաշտոնից ազատվել էր 2024 թվականին: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2023 թվականի դեկտեմբերի եւ 2024 թվականի հունվարի հրամաններով՝ դատախազությունում տեղի էին ունեցել կադրային մի շարք փոփոխություններ: Արդյունքում, Սյունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազ Տիգրան Սուքիասյանն ազատվել էր զբաղեցրած պաշտոնից:

ArmLur.am-ը հայտնել էր, որ առեղծվածային ու ողբերգական դեպք է եղել Երեւանում: Մեր հավաստի տեղեկությունների համաձայն՝ Հաղթանակ կամրջի տակ՝ Հրազդան գետում, հայտնաբերվել էր նախկին դատախազի դին: Ըստ նրա մտերիմների՝ Տիգրան Սուքիասյանը կարմիր դիպլոմով ավարտել էր Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, արդարամիտ, սկզբունքային եւ մարդասեր անձնավորություն էր, որեւէ մեկի հետ անձնական խնդիրներ կամ վնասակար սովորություններ չի ունեցել, ուներ գեղեցիկ ընտանիք, մանկահասակ դուստր: Ըստ նրա հարազատների՝ Տիգրան Սուքիասյանն իր մասնագիտական ուղու զգալի մասը նվիրել էր դատախազական համակարգին եւ պետական ծառայությանը: Հարազատների պնդմամբ՝ նա 2019 թվականից մինչեւ 2022 թվականը զբաղեցրել է Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազի պաշտոնը: 2022 թվականի դեկտեմբերին նրան որոշեցին մարզ ուղարկել՝ Սյունիք: Չնայած առաջնեկով հղի կնոջ հետ Երեւանում մշտական բնակությանը՝ Սուքիասյանին Մալաթիայի դատախազությունից տեղափոխել էին Սյունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնին: Միգուցե մտածել էին, որ նոր ամուսնացած եւ երեխայի սպասող դատախազը հնարավորություն չի ունենա եւ կիրաժարվի բնակության վայրից հեռու գտնվել եւ ինքնակամ ազատման դիմում կգրի: Սակայն Սուքիասյանը մեկնել էր Կապան:

2023 թվականի դեկտեմբերին Աննա Վարդապետյանի որոշմամբ Սյունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազ Տիգրան Սուքիասյանն ազատվել էր զբաղեցրած պաշտոնից: Սուքիասյանը չէր վիճարկել այն դատարանում՝ չցանկանալով որեւէ կերպ վնասել դատախազական համակարգը՝ հույսով, որ մի օր վերադառնալու է եւ դեռ հնարավորություն կունենա իր ջանքերը ներդնելու իրավակարգի ամրապնդման եւ պետությանն անշահախնդիր ծառայելու պատվաբեր գործում:

Ըստ հարազատների՝ Սուքիասյանն այդպես էլ չի համակերպվել եւ հաշտ չի եղել իր նկատմամբ կատարված անարդարության հետ եւ մշտապես հույս է ունեցել, որ կվերադառնա համակարգ, սակայն նրա մարմինը փետրվարի 22-ին գտան Հրազդանի կիրճում:

Արդյոք կյանքին վերջը տալը կապ ունի նրա՝ համակարգը լքելու հետ, թե այլ խնդիրներ է ունեցել նախկին դատախազը, կպարզի քննությունը, որն արդեն սկսվել է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԱՀԱՑԵԼ Է

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ կալանավոր է մահացել: Վերջինս 43-ամյա Տավրոս Ալբերտի Ոսկանյանն է, որը ունեցել է այնպիսի առողջական խնդիրներ, որոնք կալանքի հետ անհամատեղելի են եղել:

ArmLur.am-ը դիմեց Քրեակատարողական ծառայություն, որտեղից ՔԾ հանրային կապերի բաժնի պետ Նոնա Նավիկյանը հայտնեց. «ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող, 1982թ. ծնված, կալանավորված անձի ինքնազգացողության վատթարացման պատճառով 29.01.2026թ. կանչվել է շտապօգնություն, որը վերջինիս տեղափոխել է քաղաքացիական բժշկական կենտրոն: 04.02.2026թ. կալանավորված անձը տեղափոխվել է պալիատիվ բուժօգնության կենտրոն: 17.02.2026թ. կենտրոնում գրանցվել է կալանավորված անձի կենսաբանական մահը»:

Հիշեցնենք, որ քրեակատարողական հիմնարկներում 2025 թվականին արձանագրվել է մահվան 24 դեպք:

Ք. Մ.

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՄՏՑԲԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում ավարտվել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ձեռք բերելու եւ դրանք քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձին փոխանցելու դեպքի վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ փաստաբանը, հանդիսանալով քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձի պաշտպան, վերջինիս դրդմամբ նրա համար թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու եւ քրեակատարողական հիմնարկում տեսակցության ընթացքում նրան փոխանցելու եղանակով, 2026 թվականի հունվարի 10-ին հանդիպել է կալանավորված անձի ազգականին եւ նրանից ապօրինի ձեռք բերել ծխախոտի տուփի մեջ փաթեթավորված տարբեր տեսակի թմրամիջոցներ պարունակող զանգվածներ:

Այնուհետեւ փաստաբանը, թմրամիջոցների պարունակությամբ ծխախոտի տուփը թաքցնելով իր աշխատանքային պայուսակի մեջ, այցելել է քրեակատարողական հիմնարկ, սակայն այն չի կարողացել փոխանցել, քանի որ ՔԿՀ աշխատակիցներն անձնական խուզարկության ժամանակ հայտնաբերել եւ վերցրել են տարբեր տեսակի եւ չափերի թմրամիջոցները:

Վ.Ա.-ի եւ Դ.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը), կալանավորված անձի նկատմամբ՝ 44-396-րդ հոդվածի 3-րդ մասով (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառության փորձը):

Վ.Ա.-ի եւ Դ.Մ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵՑ

ArmLur.am-ին Գլխավոր դատախազությունից հայտնեցին, որ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասի (սպանության փորձ) եւ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին (ապօրինի զենք) մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում 1 անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել: Որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով:

Հիշեցնենք, որ փետրվարի 16-ին Ջովունիում կրակոցներից սպանված Ռուբեն Գ.-ն հայտնի դերասանուհի եւ օպերային երգչուհի Արսինե Նավասարդյանի որդին է: Այդ օրը՝ ժամը 23:50-ի մոտ, Կոտայքի մարզի Ջովունի բնակավայրում կրակոցներ են հնչել: Ռուբեն Գ.-ին կրակել է Ջովունի գյուղի բնակիչ, 45-ամյա Արմեն Ջ.-ն, ով փորձել է փախուստի դիմել, սակայն կարճ ժամանակ անց Նաիրիի ոստիկանության բաժնի ծառայողները նրան հայտնաբերել են Ջովունի գյուղի 11-րդ փողոցի շենքերից մեկի հարակից տարածքում: Նա ձերբակալվել է ծանր մարմնական վնասվածք պատճառելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով եւ տեղափոխվել Նաիրիի ոստիկանության բաժին, ապա ներկայացվել Նաիրիի քննչական բաժին: Հանցագործությունը նա կատարել է իր անվամբ հաշվառված «Սայգա» տեսակի որսորդական ակոսափող հրազենից:

Shamshyan.com-ը հայտնել է, որ փետրվարի 19-ին «Արմենիա» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում, գիտակցության չգալով, մահացել է Երեւանի բնակիչ, 31-ամյա Ռուբեն Գ.-ն: Նա ծանր հրազենային վնասվածքով տեղափոխվել էր բժշկական կենտրոն, որը ստացել էր փետրվարի 16-ին Ջովունի գյուղում կրակոցների ժամանակ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունում ստացվել էին տվյալներ՝ խոշոր չափերի թմրանյութ ապօրինի պահելու եւ իրացնելու վերաբերյալ: Հետագա լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումներից եւ տեղեկությունը ճշտելուց հետո քրեական ոստիկանները փետրվարի 17-ին անցան իրացման աշխատանքին: Ժամը 22:20-ին քրեական ոստիկանները Հայկավան-Նոր Արտագերս ավտոճանապարհին նախ ձերբակալեցին Հայկավան գյուղի երեք բնակչի եւ նրանցից մեկի վարած «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենայով հանդերձ տեղափոխեցին վարչություն: Մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք, իսկ վարորդի՝ 32-ամյա հայկավանցի տղամարդու խուզարկությամբ հայտնաբերվեց թղթե փաթեթ՝ վեց գրամ դեղնականաչավուն զանգվածով: Կազմված փաստաթղթերը ներկայացվեցին Արմավիրի մարզային քննչական վարչություն, նախաձեռնվեց քրեական վարույթ: Նաեւ հիմնավորվեց ոստիկանների տեղեկությունը, որ հայկավանցին թմրանյութը ձեռք է բերել Նալբանդյան գյուղի մի բնակչից:

ԱՊՕՐԻՆԻ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Էջմիածնի բնակիչ 46-ամյա մի տղամարդ զբաղվում է ապօրինի ձեռնարկատիրությամբ՝ առանց համապատասխան թույլտվության եւ պետական գրանցման տան նկուղում արտադրում եւ վաճառում է կահույք: Տեղեկությունը ստուգելու նպատակով համայնքային ոստիկաններն այցելեցին տղամարդուն: Նա ընդունեց, որ նկուղն օգտագործում է որպես կահույքի արտադրամաս, նաեւ վաճառում է կահույք՝ առանց որեւէ փաստաթղթի: Վաղարշապատի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ՝ ապօրինի ձեռնարկատիրության հատկանիշներով: Ջնությամբ տղամարդու տան նկուղում հայտնաբերվեցին նաեւ հագուստ ու կոշիկներ: Տանտերը հայտնեց, որ դրանք էլ ձեռք է բերում ու վաճառում՝ դարձյալ առանց համապատասխան փաստաթղթի:

45.5 ԿԳ ԴԵՂՈՐԱՅՔ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն շարունակում է պայքարը ստվերային տնտեսության նվազեցման, հարկերից խուսափելու դեպքերի կանխարգելման եւ մաքսային իրավախախտումների բացահայտման ուղղությամբ:

Օրերս Այրում մաքսային անցման կետ ժամանած Թբիլիսի-Երեւան մարդատար գնացքի մաքսային հսկողության ժամանակ Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման եւ հսկողության վարչության թիվ 13 բաժնի աշխատակիցները մաքսային հսկողության ընթացքում պարզել են, որ գնացքում առկա է մաքսային հսկողությունից թաքցված դեղորայք: Ուղեւորներից Ա.Տ.-ի մահճակալի տակի թաքստոցից հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված 3 մեծ պայուսակ, որոնց մեջ եղել են 45.5 կգ քաշով տարբեր տեսակի դեղամիջոցներ:

● *Անցած շաբաթ, ըստ ոստիկանության տվյալների, հայտնաբերվել է 10 հետախուզվող: Հայտնաբերվել է 1 անհետ կորած:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը գործողության մեջ է դրել 10 տոկոսի չափով ներմուծման նոր գլոբալ մաքսատուրքերը՝ հանգստյան օրերին հայտարարված 15 տոկոսի փոխարեն, գրում է Financial Times-ը ՝ վկայակոչելով ամերիկյան մաքսատան ծանուցումը: Սակագները սկսել են գործել երեքշաբթի օրը՝ երկրի արեւելյան ափի ժամանակով ժամը 00:01-ից: ԱՄՆ մաքսային եւ սահմանային պահպանության ծառայությունը ներմուծողներին տեղեկացրել է, որ առաջին փուլում մաքսատուրքերի դրույքաչափը կկազմի 10% եւ կկիրառվի բոլոր երկրների նկատմամբ՝ 150 օրվա ընթացքում, եթե բացառություններ չնախատեսվեն, հայտնում է NBC News-ը: Սպիտակ տանը հաստատել են այս տեղեկությունը՝ նշելով, որ նախագահի վարչակազմն աշխատում է մաքսատուրքերը մինչեւ 15% բարձրացնելու ուղղությամբ, սակայն դրա համար առանձին հրամանագիր կպահանջվի: ԱՄՆ Գերագույն դատարանը ուրբաթ օրը ձայների մեծամասնությամբ վճռել է, որ 2025 թվականին աշխարհի մեծ թվով երկրների ապրանքների նկատմամբ մաքսատուրքեր սահմանելու Թրամփի որոշումն անօրինական է: Ի պատասխան սրան՝Թրամփը որոշում է կայացրել բոլոր երկրներից ներմուծվող ապրանքների մաքսատուրքերի մակարդակը բարձրացնել նախ մինչեւ 10%, իսկ այնուհետեւ՝ մինչեւ 15%: Այս դեպքում նա օգտագործել է 1974 թվականի «Առեւտրի մասին» օրենքը, որը թույլ է տալիս նման սակագներ սահմանել 150 օր ժամկետով, մինչդեռ անօրինական ճանաչված նախորդ տարվա որոշումը հիմնված է եղել 1977 թվականին ընդունված «Միջազգային արտակարգ տնտեսական լիազորությունների մասին» օրենքի (IEEPA) վրա: Ուրբաթ օրը հայտարարելով 10%-անոց մաքսատուրքերի ներդրման մասին՝ Սպիտակ տունը հայտնել է, որ այդ միջոցները չեն տարածվի ապրանքների լայն տեսականու վրա, այդ թվում՝ Կանադայից եւ Մեքսիկայից ներմուծվող ապրանքների վրա: Վաշինգտոնի քաղաքականության փոփոխությունը զգուշացրել է Ատլանտյան օվկիանոսի մյուս կողմում գտնվող առեւտրային գործընկերներին, որոնք նրա հետ առանձին առեւտրային համաձայնագրեր ունեն կնքած: Այնուամենայնիվ, սակագների մինչեւ 15% բարձրացումն ընկած դադարը կարող է թույլ տալ պետություններին եւ բիզնեսին հասնել բացառությունների եւ արտոնությունների:

ՆՈՐ ՓԱԹԵԹ

Մեծ Բրիտանիայի իշխանությունները հայտարարել են Ուկրաինային օգնության հերթական փաթեթը հատկացնելու մասին, որը ներառում է էներգացանցերի վերականգնման ֆինանսավորում, բրիտանացի զինվորական վիրաբույժների փորձի փոխանցում եւ ուղղաթիռների ուկրաինացի օդաչուների վերապատրաստում որպես հրահանգիչներ: Այդ մասին ասվում է բրիտանական կառավարության կայքում: Օգնության փաթեթը ներառում է լրացուցիչ 20 միլիոն ֆունտ ստեռլինգ (26,9 միլիոն դոլար) «էներգացանցերի վերականգնման եւ լրացուցիչ արտադրական հզորությունների ապահովման» համար: 5,7 միլիոն ֆունտ ստեռլինգ (7,7 միլիոն դոլար) է հատկացվում ռազմաճակատի մոտ գտնվող համայնքների հումանիտար աջակցության համար:

ԻՐԱՆԻ ԲԱՆԱԿԸ

«ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԻՆ ՇՈՒՆՉԸ»

Իրանի Իսլամական Հանրապետության բանակի գլխավոր հրամանատար Ամիր Հաթամին հայտարարել է, որ երկրի զինված ուժերը շարունակելու են պաշտպանել Իրանի անկախությունը, տարածքային ամբողջականությունն ու քաղաքական համակարգը «մինչեւ վերջին շունչը»:



Նա այս մասին հայտնել է բանակի հրամանատարաշտաբային քոլեջի ավարտական հանդիսավոր արարողության ժամանակ՝ անդրադառնալով երկրի առջեւ ծառացած անվտանգության մարտահրավերներին: Հաթամին ընդգծել է, որ ներկայիս փոփոխվող միջավայրում զինված ուժերի դերը վճռորոշ է՝ հատկապես հիբրիդային պատերազմի եւ ռազմավարական ճնշումների պայմաններում:

Գլխավոր հրամանատարի խոսքով՝ վերջին շրջանում Իրանի դեմ ուղղված թշնամական քայլերը, որոնք նպատակ ունեին վնասել երկրին եւ նրա պետական համակարգին, բազմիցս ձախողվել են: Նա նշել է, որ նման փորձերը միայն ավելացնում են բանակի պատասխանատվությունը:

Անդրադառնալով որոշ երկրների «անպարտելիության» մասին հայտարարություններին՝Հաթամին դրանք որակել է անհիմն՝ որպես օրինակ նշելով Վիետնամում, Աֆղանստանում եւ Իրաքում տեղի ունեցած պատերազմները, որոնք, նրա գնահատմամբ, ավարտվել են արտաքին ուժերի անհաջողությամբ: Նրա խոսքով՝ արտաքին ուժերը ներխուժում են սպառնալիքներով ու ճնշումներով, սակայն, ի վերջո, ստիպված են լինում նահանջել:

Նա ներկայիս սպառնալիքները բնութագրել է որպես լայնածավալ «հիբրիդային պատերազմ», որը ներառում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական, հոգեբանական եւ ճանաչողական ոլորտները: Հաթամին ընդգծել է, որ նման մարտահրավերներին դիմակայելու հիմնական պայմանը իրազեկվածությունն ու հակառակորդի նպատակների ճշգրիտ ըմբռնումն է:

Բացի այդ, նա նախազգուշացրել է «ռազմավարական մաշեցման» քաղաքականության մասին՝ պնդելով, որ հակառակորդները փորձում են երկարաժամկետ ճնշումների միջոցով աստիճանաբար թուլացնել Իրանին: Այնուամենայնիվ, նա վստահություն է հայտնել, որ այդ ծրագրերը չեն հաջողի:

Ելույթի ավարտին Ամիր Հաթամին վերահաստատել է, որ Իրանի զինված ուժերը հավատարիմ են նահատակների ժառանգությանը եւ շարունակելու են պաշտպանել երկրի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը մինչեւ վերջին շունչը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱԽՈՂՎԵՑ

Դիլիջան համայնքը 2017թ. նոյեմբերի 20-ին հայցադիմում է ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Ազգային սոցիալական բնակարանային ասոցացիա»՝ ԱՍԲԱ հիմնադրամի՝ 2011թ. հոկտեմբերի 27-ին կնքված համաձայնագիրը եւ 2012թ. օգոստոսի 17-ին կնքված անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիրը լուծելու, հողամասը վերադարձնելու, հողամասի նախկին տեսքը վերականգնելուն պարտավորեցնելու պահանջներով:

2017թ. նոյեմբերի 23-ին հայցադիմումն ընդունվել է դատարանի վարույթ: Դատարանի 2018թ. հունիսի 27-ի արձանագրային որոշմամբ «Բնակարանների երաշխավորման հոլանդական միջազգային կազմակերպություն» հիմնադրամը ներգրավվել է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող 3-րդ անձ: Դատարանի 2018թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ հայցվորի միջնորդությունը՝ հայցի հիմքի եւ առարկայի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ, բավարարվել է: Դատարանի 2019թ. հունիսի 9-ի որոշմամբ սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչեւ թիվ ՎԴ/9301/05/18 եւ ՎԴ /0329/05/19 վարչական վարույթներով վերջնական դատական ակտեր կայացնելը:

Դատարանի 2024թ. նոյեմբերի 12-ի որոշմամբ սույն քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է: Դիլիջանի քաղաքապետարանի ներկայացուցիչը դատարանին հայտնել է, որ 2011թ. հոկտեմբերի 27-ին կնքված համաձայնագրով համայնքը պարտավորվել է ԱՍԲԱ-ին որպես սեփականություն հանձնել Դիլիջան քաղաքի Մոլդովական թաղամասի 33 000քմ հողը եւ դրանց վրա գտնվող շինությունները՝ վերապահումով, որ ՀՀ կառավարությունը պետք է տա իր համաձայնությունը այդ հողամասի հատկացման հարցում: Սակայն կառավարությունը համաձայնություն է տվել միայն 10 հազար 116քմ հողամասի ու դրա վրա առկա շինության համար:

Կողմերի միջեւ դրա վերաբերյալ պայմանագիր է կնքվել, որով քաղաքապետարանը սեփականության իրավունքով ԱՍԲԱ-ին է փոխանցել Դիլիջանի Մոլդովական փողոցի 7/2 կիսակառույց բազմաբնակարան շենքը՝ 10 հազար 116 քմ սպասարկման հողամասով: Հողամասի սեփականության ձեւակերպումից հետո նախատեսվող, կառուցվող բնակարանների քանակը պետք է լիներ 45-50, հետագա 10 տարվա ընթացքում՝ մինչեւ 190-200: Քաղաքապետարանի ներկայացուցիչը հայտնել է, որ ԱՍԲԱ-ն 45-50 միավոր անշարժ գույքի փոխարեն կառուցել է 14 -ը, կիսատ է թողել ծրագրի իրականացումը: Քաղաքապետարանի ներկայացուցիչը նշել է նաեւ, որ ԱՍԲԱ-ի կողմից վարկային պարտավորությունների խախտման հետեւանքով ԱՍԲԱ-ի պարտապանը սկսել է գույքի արտադատարանական իրացման գործընթաց, ինչի իրականացման դեպքում Դիլիջանի սոցիալական բնակարանային ներդրումային ծրագրի իրականացման նպատակով տրամադրված տարածքը կարող է դառնալ այլ անձի սեփականություն: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող 3-րդ անձի ներկայացուցիչը դատարան առարկություն է ներկայացրել, հայտնել, որ 2012թ. ապրիլի 23-ին «Բնակարանների երաշխավորման հոլանդական միջազգային կազմակերպություն» կամ Դի Այ Ջի Էյջ-ի եւ «Ազգային սոցիալական բնակարանային ասոցացիա» հիմնադրամի՝ԱՍԲԱ-ի միջեւ կնքվել է վարկային համաձայնագիր, որով Դի Այ Ջի Էյջ-ը ԱՍԲԱ-ին տրամադրել է 361 միլիոն 784 հազար 304 ՀՀ դրամ երկարաժամկետ վարկ, որը համարժեք է 711 հազար 750 եվրոյին: 2012թ. նոյեմբերի 29-ին Դի Այ Ջի Էյջ-ի եւ ԱՍԲԱ-ի միջեւ կնքվել է գրավի (հիփոթեքի) պայմանագիր, որով վարկային համաձայնագրով ԱՍԲԱ-ի կողմից ստանձնած վարկային պարտավորության ապահովման համար գրավադրվել է ԱՍԲԱ-ին սեփականության իրավունքով պատկանող Դիլիջանի Մոլդովական փողոց 7/2 հասցեում գտնվող 10 հազար 116 քմ հողը եւ անավարտ շենք-շինությունը, ինչպես նաեւ վարկային համաձայնագրով նախատեսվող, նոր կառուցվող 30 բնակարանները:

2026թ. հունվարի 30-ին դատավոր Գրիգորի Վարդանյանը վճռել է Դիլիջան համայնքի հայցն ընդդեմ «Ազգային սոցիալական բնակարանային ասոցացիա» հիմնադրամի, մերժել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

● *Փետրվարի 16-ից 23-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 6738 խախտում:*

ԱՇԽԱՐՀ

ՄԵՂԱԴՐԵԼ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ լրատվամիջոցները միտումնավոր կերպով ճիշտ չեն գրում Իրանի հետ հնարավոր պատերազմի մասին, եւ որ ինքը կնախընտրեր համաձայնագիր կնքել: Այս մասին նա գրել է Truth Social հարթակում: «Իրանի հետ հնարավոր պատերազմի մասին գրված ամեն ինչ ճիշտ չէ ներկայացված, եւ դա արվել է դիտավորյալ: Որոշում կայացնողը ես եմ, եւ ես կնախընտրեի գործարք կնքել, բայց եթե մենք գործարք չկնքենք, ապա դա շատ վատ կլինի այդ երկրի եւ, ցավոք, դրա ժողովրդի համար»,-գրել է Թրամփը: Նրա խոսքով՝ ԶԼՄ-ների պնդումները, թե ԱՄՆ շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահ գեներալ Դենիել Քեյնը չի աջակցում Իրանի դեմ արշավ սկսելուն, նույնպես սխալ են: «Գեներալ Քեյնը, ինչպես եւ մենք բոլորս, չի ցանկանում պատերազմ տեսնել, բայց եթե որոշում կայացվի Իրանին ռազմական մակարդակով դիմակայելու վերաբերյալ, ապա նա կարծում է, որ հեշտ կլինի հաղթել»,-ընդգծել է նախագահը: Նա հավելել է, որ Քեյնը դեմ չի արտահայտվել ռազմական գործողություններին, ինչպես նաեւ չի խոսել սահմանափակ հարվածների մասին, եւ եթե իրեն հրամայեն, ապա կգլխավորի գործողությունը:

Axios հարթակը, հղում անելով աղբյուրների, հաղորդել էր, թե Քեյնը նախազգուշացրել է Թրամփին եւ բարձրաստիճան պաշտոնյաներին, որ Իրանի դեմ ռազմական արշավը կարող է պարունակել զգալի ռիսկեր, մասնավորապես ձգձգվող հակամարտության մեջ ներքաշվելու հավանականություն: Դրա հետ մեկտեղ, ըստ լրատվամիջոցի, ԱՄՆ վարչակազմը շարունակում է քննարկել Իրանի վերաբերյալ տարբերակները եւ դրանցից յուրաքանչյուրի հետեւանքները:

ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ Օմանի միջնորդությամբ անուղղակի բանակցությունների երրորդ փուլը նախատեսված է փետրվարի 26-ին Ժնեւում:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Դանիայի կառավարությունը որոշում է ընդունել Ուկրաինային հատկացնել 190 միլիոն կրոն (30 միլիոն դոլար)՝ որպես լրացուցիչ մարդասիրական օգնություն, հայտնել է Դանիայի արտաքին գործերի նախարարությունը: Այս մասին հաղորդում է ՏԱՍՍ գործակալությունը: Գերատեսչության ղեկավար Լարս Լյոկե Ռասմուսենի խոսքով՝ միջոցները թույլ կտան «հաղթահարել սուր հումանիտար իրավիճակը եւ ապահովել օգնություն երկարաժամկետ հեռանկարում»: Միջոցները կուղարկվեն Դանիայի քաղաքացիական հասարակության օգնության կազմակերպությունների, Ուկրաինայում ՄԱԿ-ի Մարդասիրական հիմնադրամի, Փախստականների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի վարչության, ՅՈՒՆԻՍԵՖ-ի եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով:

2022 թվականի փետրվարի 24-ին Ռուսաստանի կողմից Ուկրաինայում ռազմական գործողությունների ծավալումից ի վեր Դանիան Ուկրաինային է տրամադրել 205 միլիոն դոլարի մարդասիրական օգնություն եւ 11,19 միլիարդ դոլարի ռազմական օգնություն:

ՆՈՐ ԹՈՒՆԵԼ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԻՑ

Փետրվարի 11-ին Դիլիջան-Սեւան ավտոճանապարհային նոր թունելի վերաբերյալ հարցում եմ ուղարկել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Արկադի Չերչինյանին: Հարցրել եմ, թե որ կազմակերպությունն է կազմել նոր թունելի նախագիծը, ինչքան գումար է հատկացվել նախագծի ստեղծման համար, որտեղից է ֆինանսավորվել այդ նախագծի ստեղծումը:



Փետրվարի 16-ին ստացել եմ Ա. Չերչինյանի պատասխանը, ուր նշված է. «Սեւան-Դիլիջան ավտոճանապարհային նոր թունելի նախագծի հեղինակն ավստրիական «BERNARD gruppe ZT GmbH եւ ACTES bernard GmbH» համատեղ ձեռնարկությունն է: Նախագծի ստեղծման համար հատկացվել է 963,96 հազ. եվրո՝ Ասիական զարգացման բանակի հետ դեռեւս 2016թ. նոյեմբերի 9-ին ստորագրված 3449-ARM վարկային համաձայնագրի խնայված միջոցներից»:

Ա. Չերչինյանին հարց եմ ուղղել՝ Դիլիջան-Սեւան թունելը որտեղ, գործող թունելից որքան հեռավորությամբ է կառուցվելու: Ճանապարհային դեպարտամենտի ղեկավարի պատասխանում գրված է. «Նոր թունելը կառուցվելու է գործող թունելի ձախ կողմում (Սեւան-Դիլիջան ուղղությամբ): Նոր թունելի ճակատամուտքերը գտնվելու են գործող թունելի ճակատամուտքերից շուրջ 50 մ հեռավորության վրա»:

Չերչինյանին հարցրել եմ՝ Դիլիջան-Սեւան նոր թունելի շինարարության արժեքը որքան է, որ աղբյուրից է շինարարությունը ֆինանսավորվելու: Նա հայտնել է. «Դիլիջան-Սեւան նոր թունելի շինարարության արժեքը շուրջ 80 մլն եվրո է: Շինարարությունը ֆինանսավորվելու է Ասիական զարգացման բանկի հետ ներկայումս նախապատրաստվող վարկային համաձայնագրի շրջանակներում»:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենին հարցրել եմ նաեւ, թե ինչու է անհրաժեշտություն առաջացել նոր թունելի շինարարության, նոր թունելի կառուցումից հետո հին թունելն ինչ նպատակների է ծառայելու: Ա. Չերչինյանը պատասխանել է. «Նոր թունելի կառուցման անհրաժեշտությունը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով. հիմնվելով թունելի հետազոտության արդյունքների վրա եւ վերլուծելով մի շարք նմանատիպ թունելների վերակառուցման տվյալները՝ նախագծողը թունելի ԵՄ հրահանգների պահանջներին հնարավորին չափ համապատասխան վերակառուցման եւ արդիականացման շինարարական աշխատանքների մոտավոր արժեքը գնահատել էր 47,5-ից մինչեւ 63,0 մլն եվրո, իսկ տեւողությունը՝ շուրջ 2,5 տարի: Ընդ որում, շինարարության ընթացքում թունելով երթեւեկությունն ամբողջովին դադարեցվելու էր, եւ պետք է կազմակերպվեր թունելը շրջանցող /Մ4/-Սեմյոնովկա-/Մ4/ ճանապարհով, որի տեխնիկական պարամետրերը թույլ չեն տալիս ապահովել թունելով անցնող երթեւեկությունը: Հետեւաբար, նախքան թունելի վերակառուցման աշխատանքները սկսելը, անհրաժեշտ էր լինելու վերակառուցել շրջանցիկ ճանապարհը, ինչի համար կպահանջվեր շուրջ 2 տարի եւ շուրջ 163 մլն եվրո ներդրում: Ընդ որում, շրջանցիկ ճանապարհով երթեւեկությունը ենթադրում է մեքենաների լրացուցիչ 4,4 կմ վազք, ինչը թունելի 2,5 տարի տեւող շինարարական աշխատանքների ընթացքում կհանգեցնի լրացուցիչ շուրջ 3,7մլն լիտր վառելիքի (չհաշված ոլորաններում եւ ձմեռային պայմաններում դանդաղ ընթացքի ժամանակ ծախսի ավելացումը)՝ մոտավորապես 4,37 մլն եվրո արժեքով: Այսինքն՝ Դիլիջանի թունելի վերակառուցման եւ արդիականացման, շրջանցիկ ճանապարհով անխափան եւ անվտանգ երթեւեկություն ապահովելու համար կպահանջվեր շուրջ 4,5 տարի ժամանակ եւ մոտավորապես 68,17-ից 83,67 մլն եվրո ներդրումներ: Հարկ է նշել, որ Սեւան-Դիլիջան գործող թունելի վերակառուցումը միայն մասամբ կարող էր ապահովել Եվրամիության՝ թունելների անվտանգությանն ուղղված հրահանգների պահանջները: Նախագծողը դիտարկել էր նաեւ այլընտրանքային տարբերակ, այն է՝ կառուցել ԵՄ հրահանգների պահանջներին բավարարող նոր թունել, որից հետո գոյություն ունեցող թունելում վերանորոգման աշխատանքներ կատարելով՝ այն վերածել տարհանման թունելի: Վերլուծելով մի շարք նմանատիպ թունելների կառուցման տվյալները՝ նախագծողն այս տարբերակի մոտավոր արժեքը, ներառյալ գոյություն ունեցող թունելը տարհանման թունելի վերածելու որոշակի շինարարական աշխատանքները, գնահատել է 70,3-ից մինչեւ 82,0 մլն եվրո, իսկ տեւողությունը՝ 4,5 տարի: Քանի որ երկու տարբերակներն էլ ունեին միեւնույն տեւողությունը եւ մոտավորապես նույն արժեքը, որոշվեց ընդունել նոր թունելի կառուցման տարբերակը՝ հաշվի առնելով նաեւ դրա հետեւյալ առավելությունները՝

ա) գոյություն ունեցող թունելը նոր թունելի շինարարության ողջ ընթացքում կպահպանվի եւ բաց կլինի երթեւեկության համար՝ խուսափելով շրջանցիկ ճանապարհից օգտվելու հետ կապված վերոհիշյալ եւ հնարավոր այլ խնդիրներից,

բ) նոր թունելը լիովին կհամապատասխանի Եվրամիության՝ թունելների անվտանգությանն ուղված հրահանգների պահանջներին:

Հին թունելը որոշակի վերանորոգումից հետո արտակարգ իրավիճակների դեպքում ծառայելու է որպես տարհանման թունել»:

Նաեւ հարցրել եմ՝ երբ է սկսվելու Դիլիջան-Սեւան նոր թունելի շինարարությունը, քանի տարում է այն կառուցվելու, երբ է նախատեսված թունելի շինարարության համար մրցույթ հայտարարել: Ա. Չերչինյանը հայտնել է. «Սեւան-Դիլիջան նոր թունելի շինարարությունը նախատեսվում է սկսել 2027թ. երկրորդ կիսամյակում՝ կապված Ասիական զարգացման բանկի հետ նոր վարկային համաձայնագրի նախապատրաստման աշխատանքների ընթացքից: Շինարարական աշխատանքները նախնական գնահատմամբ կտեւեն շուրջ 4,5 տարի: Նոր թունելի շինարարության համար մրցույթը նախատեսվում է հայտարարել 2026թ. երկրորդ կիսամյակում՝ կապված Ասիական զարգացման բանկի հետ նոր վարկային համաձայնագրի նախապատրաստման աշխատանքների ընթացքից»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

Մեծ Բրիտանիան հակառուսական պատժամիջոցների ցուցակում ավելացրել է 240 ընկերություն, 50 նավ եւ 7 ֆիզիկական անձ: Այս մասին ասվում է Միացյալ Թագավորության կառավարության կայքում հրապարակված փաստաթղթում: Պատժամիջոցներն ընդունվել են Ռուսաստանի կողմից Ուկրաինայում ռազմական գործողությունների ծավալման 4-րդ տարելիցի կապակցությամբ: Ցանկում հայտնվել են ընկերություններ եւ անձինք, որոնք աջակցում են Ռուսաստանի էներգետիկ ոլորտին, նավեր, որոնք ներգրավված են եղել դեպի երրորդ երկրներ ռուսական նավթի եւ հեղուկացված բնական գազի տեղափոխման գործում, Ռուսաստանի ֆինանսական ոլորտի հետ կապված ընկերություններ, Ռուսաստանի պաշտպանության ոլորտի հետ կապված ընկերություններ եւ անձինք: Պատժամիջոցների ցանկում են հայտնվել նաեւ վրացական «Իմեդի» եւ «Փոստ» հեռուստաալիքները՝ ռուսական ապատեղեկատվության տարածման գործում իրենց դերի համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԵՄԻ ՆՈՐ ՈՒԺԸ

ՄԱՀԱՑԵԼ Է ՕԼԳԱ ԳԱԲԱՅԱՆԸ

Մահացել է օպերային երգչուհի, մեցցո-սոպրանո, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Օլգա Գաբայանը:

Այս մասին հայտնում է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնը:

Հայկական օպերային արվեստում առանձնահատուկ տեղ ունեն այն երգիչները, որոնք ոչ միայն տիրապետում են բարձրակարգ վոկալ տեխնիկայի, այլեւ կարողանում են բեմում ստեղծել ամբողջական կերպար: Այդպիսի արվեստագետներից էր Օլգա Գաբայանը, որի կատարումները աչքի են ընկնում զգացմունքային խորությամբ եւ արտահայտչականությամբ:

Օլգա Գաբայանի ստեղծագործական ուղին ձեւավորվել է ակադեմիական վոկալի հիմքի վրա: Նրա երաժշտական կրթությունն ու բեմական փորձը նպաստել են այնպիսի արտիստական մտածողության ձեւավորմանը, որտեղ երաժշտությունն ու դերասանական խաղը դառնում են մեկ ամբողջություն:

Օլգա Գաբայանը ծնվել է 1940 թվականի դեկտեմբերի 27-ին: 1966 թվականին ավարտել է Երեւանի պետական կոնսերվատորիան: Նույն թվականից եղել է Երեւանի օպերային թատրոնի մեներգչուհի: 1992 թվականից դասավանդել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Օպերային արվեստը պահանջում է ոչ միայն ձայնային կարողություններ, այլեւ մեծ աշխատասիրություն եւ հոգեւոր դիմացկունություն: Օլգա Գաբայանի գործունեությունը վկայում էր, որ նա այդ պահանջներին մոտենում էր պատասխանատվությամբ ու նվիրվածությամբ: Նրա յուրաքանչյուր ելույթ հանդիսատեսի համար դառնում էր ոչ պարզապես համերգ, այլ երաժշտական ապրում:

Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում կերտել է Ալմաստի դերը, Տիգրան Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայում՝ Փառանձեմի դերը, Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայում մարմնավորել է Թամարին, Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերայում Աննայի դերն է կերտել, Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայում մարմնավորել է Կարմենին, Ջուզեպե Վերդիի «Աիդա» օպերայում՝ Ամներիսին, Վերդիի «Տրուբադուր» օպերայում՝ Ազուչենային:

2016 թվականին հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է 2-րդ աստիճանի մեդալի:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԷՓՇՏԵՅՆԻ 6 ԳԱՂՏՆԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ

Սեռական հանցագործությունների համար դատապարտված եւ 2019 թվականին բանտում մահացած ֆինանսիստ Ջեֆրի Էփշտեյնը վեց պահեստային տարածք է վարձակալել ԱՄՆ-ի տարբեր նահանգներում՝ իրավապահներից թաքցնելու համար իր հանցագործություններին առնչվող լուսանկարներն ու համակարգիչները: Այս մասին գրում է The Telegraph-ը:

Պարբերականի տվյալներով՝ քննիչները այդպես էլ խուզարկություն չեն իրականացրել նշված տարածքներում, ինչը մեծացնում է հավանականությունը, որ Էփշտեյնի գործով դեռեւս չուսումնասիրված փաստաթղթեր կարող են պահպանված լինել: Թե ներկայում ինչ է կատարվում այդ արխիվների հետ, հայտնի չէ:

Ըստ հրապարակման՝ 2000-ականների կեսերին նախապատրաստվող խուզարկության մասին տեղեկանալուց հետո Էփշտեյնը վարձել է մասնավոր խուզարկուների, որպեսզի նրանք համակարգիչները տեղափոխեն Նյու Յորքում գտնվող գաղտնի պահոց: Այդ ծառայությունների դիմաց վճարվել են տասնյակ հազարավոր դոլարներ:

Շենքերից մեկը նա վարձակալել է Ֆլորիդայում առնվազն 2003 թվականից, եւ դրա համար կանոնավոր վճարումներ են իրականացվել մինչեւ նրա մահը՝ 2019 թվականը:

Բացի այդ, Էփշտեյնի աշխատակիցները քննարկել են համակարգիչների եւ կրիչների տեղափոխումը նրա՝ ԱՄՆ Վիրջինյան կղզիներում գտնվող կղզուց գաղտնի պահոցներ: Պարբերականի վարկածով՝ խոսքը կարող է վերաբերել մինչեւ 2009 թվականը ստեղծված նյութերին: Նամակագրությունից հետեւում է, որ տեխնիկան եւ փաստաթղթերը թաքցնելու սխեման բազմիցս կիրառվել է:

ԴՈՒՔՍԸ՝ «ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾ» ԼՈՒՎՐՈՒՄ

Էնդրյու Մաունթբաթեն-Վինձորի՝ Նորֆոլկի ոստիկանության կողմից ձերբակալվելուց հետո արված հայտնի լուսանկարը ակտիվիստների կողմից կախվել է Լուվրում:

«Բոլորը ատում են Էլոնին» բրիտանական քաղաքական խումբը կիրակի օրը լուսանկարը կպցրել է Փարիզի պատկերասրահի պատին:

Լուսանկարում Էնդրյուն նստած է Range Rover-ի հետեւի մասում՝ Այլշամի ոստիկանական բաժանմունքում 11 ժամ կալանքի տակ անցկացնելուց հետո:

Լուսանկարն արվել է հինգշաբթի օրը Սանդրինգհեմի կալվածքի տարածքում նրա ձերբակալությունից հետո (չարաշահումների կասկածանքով):

Յորքի նախկին դուքսը մեղադրվում է 2001-ից 2011 թվականներին առեւտրի դեսպանի պաշտոնում ծառայելիս վարկաբեկված ֆինանսիստ Ջեֆրի Էփշտեյնին գաղտնի կառավարական փաստաթղթեր ուղարկելու մեջ:

Էնդրյուն, որի 66 տարեկանը լրացել է հենց ձերբակալության օրը, նախկինում հերքել էր Էփշտեյնի հետ կապված որեւէ չարաշահում, եւ հրապարակավ հայտարարել էր իր ափսոսանքի մասին նրա հետ ունեցած բարեկամության համար:

Էնդրյուի՝ դատապարտված սեռական հանցագործի հետ կապը ստիպեց նրան հրաժարվել թագավորական պարտականություններից, եւ 2022 թվականի հունվարին նա զրկվեց թագավորական հովանավորությունից: 2025 թվականի հոկտեմբերին նա լքեց իր Վինձորի տունը՝ Royal Lodge-ը, եւ տեղափոխվեց Սանդրինգհեմի ավելի համեստ մասնավոր բնակարան:

Դաունինգ սթրիթի պաշտոնյաները, ըստ տեղեկությունների, քննարկում են նախկին արքայազնին ժառանգության գծից հեռացնելու հարցը:

Էնդրյուն մնում է գահի ժառանգության հերթում ութերորդը, եւ նրա հեռացումը կլինի ժառանգության գծի ամենակարեւոր փոփոխությունը Էդվարդ VIII-ի հրաժարումից ի վեր:

Ժամանակավորության գծի փոփոխության համար անհրաժեշտ է խորհրդարանի օրենք, ինչպես նաեւ Ազգերի համագործակցության 14 այլ երկրների, այդ թվում՝ Ճամայկայի, Կանադայի եւ Ավստրալիայի համաձայնությունը:

Ներկայումս օրենսդրական ցանկացած փոփոխություն հետաձգվում է մինչեւ նախկին արքայազնի նկատմամբ ոստիկանության հետաքննության ավարտը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՒԵՖԱ-Ն ՈՐԱԿԱԶՐԿԵԼ Է

Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միությունը (ՈՒԵՖԱ) որակազրկել է Լիսաբոնի «Բենֆիկայի» արգենտինացի կիսապաշտպան Ջանլուկա Պրեստիանին՝ ժամանակավորապես հեռացնելով պաշտոնական խաղերից: Այս մասին հայտնում է ՈՒՖԵԱ-ի կայքը: Ֆուտբոլիստը պատժվել է Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորի հասցեին հնչեցրած հնարավոր ռասիստական վիրավորանքների պատճառով: Պորտուգալական ակումբը մտադիր է բողոքարկել որոշումը: Ավելի վաղ հաղորդվել էր, որ Չեմպիոնների լիգայի անցումային փլեյ-օֆֆի առաջին «Բենֆիկա» - «Ռեալ» խաղի ընթացքում Պրեստիանին վիրավորել էր Վինիսիուսին, ինչից հետո բրազիլացին մոտեցել էր մրցավարին եւ հայտնել ռասիստական վիրավորանքի մասին: Իսպանիայի փոխչեմպիոն Մադրիդի «Ռեալը» պորտուգալական «Բենֆիկային» հաղթել էր նվազագույն հաշվով: Միակ գոլի հեղինակը բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորն էր: Պատասխան հանդիպումը տեղի կունենա փետրվարի 25-ին:

ԿՇԱՐՈՒՆԱԿԻ

Պորտուգալիայի ֆուտբոլի ազգային հավաքականի եւ սաուդյան «Ալ-Նասր»-ի հարձակվող Քրիշտիանու Ռոնալդուն հայտարարել է, որ կշարունակի ելույթները Սաուդյան Արաբիան ներկայացնող ակումբի կազմում: «Ինչպես մի քանի անգամ ասել եմ, ես պատկանում եմ Սաուդյան Արաբիային եւ ցանկանում եմ շարունակել ելույթներս այստեղ: Սա մի երկիր է, որն ընդունել է ինձ, ընտանիքիս ու ընկերներիս: Ես այստեղ երջանիկ եմ եւ ուզում եմ մնալ»,-այս մասին ասել է Ռոնալդուն: Նա մասնակցել է Սաուդյան Արաբիայի առաջնության 23-րդ տուրի հանդիպմանը «Ալ Հազեմ»-ի դեմ՝ դառնալով դուբլի հեղինակ: «Ալ-Նասր»-ն այդ խաղը հաղթել է 4-0 հաշվով: Ռոնալդուն ավելի վաղ բոյկոտել էր «Ալ-Նասր»-ի 3 հանդիպում՝ դժգոհություն արտահայտելով ակումբի կառավարման հարցում Սաուդյան Արաբիայի ներդրումային հիմնադրամի գործողություններից: Այնուհետեւ ԶԼՄ-ներում լուրեր տարածվեցին, որ Սաուդյան Արաբիայի ներդրումային հիմնադրամի ղեկավարները բավարարել են Ռոնալդուի պահանջները, որից հետո վերջինս որոշել է շարունակել աշխատանքն «Ալ-Նասր»-ի հետ:

ԶԻԴԱՆԸ ԿԳԼԽԱՎՈՐԻ

Լեգենդար ֆուտբոլիստ, Մադրիդի «Ռեալ»-ի նախկին գլխավոր մարզիչ Զինեդին Զիդանը կգլխավորի Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային հավաքականը: Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում գրել է ֆուտբոլային հայտնի ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն: Նա գրել է, որ Զիդանն արդեն բանավոր պայմանավորվածություն ունի Ֆրանսիայի հավաքականը գլխավորելու վերաբերյալ: Նրա տեղեկություններով՝ Զիդանը Ֆրանսիայի հավաքականը կգլխավորի աշխարհի 2026թ. առաջնության ավարտից անմիջապես հետո: Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչն այս պահին Դիդյե Դեշամն է:

● *Փետրվարի 25-ին՝ ժամը 19:00-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Ավետիք Իսահակյանը երգերի մեջ» համերգային երեկոն:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է Մաքսային միության ադրանքը:
Գառնիկ Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մաքսային միության մաքսային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի համաձայն՝ Մաքսային միության ապրանքները Մաքսային միության մաքսային տարածքում գտնվող ապրանքներն են, որոնք ամբողջությամբ արտադրվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում, ներմուծվել են Մաքսային միության մաքսային տարածք եւ ստացել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ՝նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, պատրաստվել են Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում նշված ենթակետի երկրորդ եւ երրորդ պարբերություններում նշված ապրանքներից եւ (կամ) օտարերկրյա ապրանքներից եւ, նշված օրենսգրքին եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան, ձեռք են բերել Մաքսային միության ապրանքների կարգավիճակ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մաքսային միության մաքսային օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝«Վերաարտահանում» մաքսային ընթացակարգի դեպքում Մաքսային միության մաքսային տարածք ավելի վաղ ներմուծված ապրանքները կամ ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները, որոնք ձեւակերպվել են «մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով, այդ տարածքից արտահանվում են առանց ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարման եւ (կամ) ներմուծման մաքսատուրքերի վճարված գումարների վերադարձման (հաշվանցման) եւ առանց ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:
Մոնիկա Կարապետյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գրավոր աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից կողմերի, իսկ մինչեւ տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին: Աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ կողմերի էլեկտրոնային ստորագրությամբ: Էլեկտրոնային ստորագրությամբ կնքված աշխատանքային պայմանագրի մեկ օրինակը էլեկտրոնային եղանակով փոխանցվում է աշխատողին, իսկ մինչեւ տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին: Աշխատանքի անցնելուց առաջ գործատուն կամ նրա լիազորած անձը պարտավոր է աշխատանքի ընդունվող անձին պատշաճ ծանոթացնել աշխատանքի պայմաններին, կոլեկտիվ պայմանագրին (դրա առկայության դեպքում), ներքին կարգապահական կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող գործատուի այլ իրավական ակտերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի: Աշխատանքային պայմանագրում նշված օրն անհարգելի պատճառով աշխատանքի չներկայանալը հիմք է աշխատանքային պայմանագրի լուծման համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը Armenpress-ից

Կենտրոն վարչական շրջանի եւ «Սերգեյ Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ-ի միջեւ կնքվող հուշագրի պաշտոնական արարողությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 4 - 9 + 2 + 6
	Կոտայքի լեռներ	- 4 - 8 + 2 + 5
	Կոտայքի նախալեռներ	- 1 + 2 + 9 +11
	Գեղարքունիք	- 4 - 8 + 2 + 5
	Լոռի	- 2 - 6 + 7 + 10
	Տավուշ	- 2 - 5 + 7 + 10
	Արագածոտնի լեռներ	- 5 - 9 + 2 + 5
	Արագածոտնի նախալեռներ	- 2 + 2 + 8 + 12

	Արարատ	- 1 + 2 + 9 + 13
	Արմավիր	- 1 + 2 +11 + 15
	Վայոց ձորի լեռներ	- 5 - 8 + 2 + 6
	Վայոց ձորի նախալեռներ	- 1 + 3 +11 + 15
	Սյունիքի լեռներ	- 5 - 9 + 3 + 6
	Սյունիքի նախալեռներ	- 2 - 6 + 9 + 12
	Սյունիքի հովիտներ	0 + 4 +11 + 15
	Երեւան	+ 1 + 3 + 12 + 14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*